

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետև՝ օրենք)՝ 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում, 7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մաս.

«Բժշկական հիմնարկները (հաստատությունները) պարտավոր են առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձի առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման վերաբերյալ տեղեկությունները տրամադրել՝

1) ոստիկանությանը անհապաղ, եթե դրանք հիմք են տալիս ենթադրելու, որ անձի առողջությանը կամ կյանքին վնաս է պատճառվել հանցագործության, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, կամ երբ անձի մոտ առկա հիվանդությունը կարող է վտանգ ներկայացնել շրջապատի համար.

2) հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին, դատարանին՝ քրեական գործի քննության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու, ինչպես նաև թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն)

նյութերի ապօրինի շրջանառությունը կանխարգելելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ գրավոր հարցումների հիման վրա:»:

ՀՈՂԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: